ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/194

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2022թ. թիվ 26/26-1/6979-2022 գրությամբ «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 14.04.2022թ. թիվ 08-088 գրության հիման վրա, 21.04.2022թ. թիվ 26/26-1/6979-2022 գրությամբ նախաձեռնել է «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ ներկայացրել է տեղեկանք՝

տրված «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի գլխավոր տնօրենի կողմից և Էմմա Արթուրի Հարությունյանի ծննդյան վկայականի պատճենը:

«Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/194 ընթացակարգի շրջանակներում 30.05.2022թ. ժամը 11:43-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.04.2022թ. թիվ 08-088 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 02.03.2022թ. հայտարարել էր «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40» ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների գնման ընթացակարգ: Էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվող տվյալ գնման ընթացակարգին մասնակցության հայտ էր ներկայացրել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն: 18.03.2022թ. կայացած նիստում ընկերությունը ճանաչվել էր հաղթող մասնակից 32 և 33-րդ չափաբաժիններով: Պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է տեղեկագրում 22.03.2022թ.: Պայմանագիր կնքելու առաջարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է մասնակցին 29.03.2022թ.: Մասնակցի կողմից կնքված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները պատվիրատուին ներկայացնելու համար ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օրյա ժամկետը ավարտվել է 12.04.2022թ. (ներառյալ):

Սահմանված ժամկետում Ընկերությունը կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները Պատվիրատուին չի ներկայացրել, հետևաբար զրկվել է այն կնքելու իրավունքից: (...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/194 ընթացակարգի շրջանակներում 30.05.2022թ. ժամը 11:43-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 32-րդ և 33-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 29.03.2022թ. ծանուցել է «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել կնքված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները և որոշում կայացրել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2022թ. թիվ 26/26-1/6979-2022 գրությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 14.04.2022թ. թիվ 08-088 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 32-րդ և 33-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 29.03.2022թ. ծանուցել է «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել կնքված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները և որոշում կայացրել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Գործի քննության շրջանակներում «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է տեղեկանք՝ տրված «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի կողմից, 22.04.2022թ. հետևյալ բովանդակությամբ.

«Տրվում է Լիլիթ Բլոցյանին առ այն, որ նա իր երեխայի՝ Էմմա Արթուրի Հարությունյանի հետ միասին 30.03.2022թ.-ից գտնվել է մեկուսացման մեջ և նախապատրաստվել վիրահատության վերջինիս մոտ առկա հետարյունազեղումային հիդրոցեֆալիայի կապակցությամբ:

Պացիենտը ծնողի հետ միասին հոսպիտալացվել է բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժական բաժանմունքում ապրիլի 12-ին և ապրիլի 15-ին վիրահատվել:

Կատարվել է վենտրիկուլոպերիտոնեալ շունտավորում ընդհանուր անզգայացմամբ, հետվիրահատական ընթացքը հարթ է»:

Ներկայացվել է նաև Էմմա Արթուրի Հարությունյանի ծննդյան վկայականի պատճենը, որով հավաստվում է, որ «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Լիլիթ Բլրցյանը հանդիսանում է վերջինիս մայրը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության, այն է՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, որը տվյալ դեպքում՝ 29.03.2022թ. Ընկերությանը ծանուցելու պայմաններում հոսել է 30.03.2022թ և ավարտվել 12.04.2022թ.-ին, Պատվիրատուին ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված ժամկետում չներկայացնելը պայմանավորված է եղել «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ի տնօրենի երեխայի վատառողջ լինելու և վերջիններիս 30.03.2022թ.-ից մեկուսացված, այնուհետև հոսպիտալացված լինելու հանգամանքով:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***<u>քանի որ «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ն նման պայմաններում օբյեկտիվորեն իր կամքից անկախ պատճառներով զրկված է եղել սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը և որակավորման ու պայմանագրի ապահովումները Պատվիրատուին ներկայացնելու հնարավորությունից:</u>***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2022թ. թիվ 26/26-1/6979-2022 գրությամբ «Դայմընդ մեդիքալ գրուպ» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**